ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ----- 2023 թվականի №--Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 19-Ի №635Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ, 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, հաշվի առնելով 1800ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթի վերադասավորման վերաբերյալ «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերության 2023 թվականի մայիսի 2-ի №676/23-11 գրությունը և տվյալ հարցի քննարկման շրջանակում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2023 թվականի մայիսի 8-ի №ՍՇ/34.2-Մ2-9/1482-2023 և օգոստոսի 16-ի №ՍԱ/34.2-Մ2-9/2990-2023 գրություններին ի պատասխան «ՅՈՒՔՈՄ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերության) համապատասխանաբար՝ օգոստոսի 9-ի №829 և օգոստոսի 23-ի №868 գրությունները, և ելնելով ռադիոհաճախականությունների տիրույթի արդյունավետ օգտագործման խրախուսման, դրանց արդյունավետ կառավարման, Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային հաղորդակցության բնագավառի զարգացման, ենթակառուցվածքներում տնտեսապես արդյունավետ ներդրումների խրախուսման, հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների որակի բարելավման, նորարարության խթանման նկատառումներից՝ Հանձնաժողովը **որոշում է**.

1. Հանձնաժողովի 2008 թվականի նոյեմբերի 19-ի «ՖՏԱ ՏԵԼԵԿՈՄ» փակ բաժնետիրական ընկերությանը հանրային շարժական կապի ծառայությունների մատուցման համար հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործման) լիցենզիա, ռադիոհաճախականությունների օգտագործման և համարների զբաղեցման թույլտվություններ տրամադրելու մասին» №635Ա որոշման 1-ին, 2-րդ կետերում և 2-րդ կետի 2-րդ ենթակետով հաստատված

հավելվածում «1855-1875ՄՀg/1760-1780ՄՀg» թվերը փոխարինել «1860-1880ՄՀg/1765-1785ՄՀg» թվերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երեսնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել կարգավորող Հանձնաժողով կամ երկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- օգոստոսի 2023թ.